

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊՈՒՇԿԻՆԻ «ՏԱԶԻՏ» ՔԵՐԹՈՒԱԾԸ

ԵՒ ԴՐԱ ՄԷՋ ՀԱՅԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՈՒԱԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆԸ

Գաղտնիք չէ, որ ճշմարտութեան հետ կողք-կողքի սուտն ու կեղծիքը եւս երկար կեանք ունեն: Եւ դրանց երկարակեցութեանը, յաճախ, նպաստում են առաջին հայեացքից անմեղ ու աննշան թուացող թիւրիմացութիւնները: Սրա լաւագոյն մի օրինակ է ստորեւ ներկայացուող զրպարտութիւնը ուուս մեծագոյն բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինի հասցէին:

Շատ վաղուց շրջանառութեան մէջ է այս հսկայ բանաստեղծի անուանը յանիրաւի կապուած մի հին ու տարածուած թիւրիմացութիւն: Իբր թէ Ա. Պուշկինը եղել է հայտեաց եւ նոյնիսկ իր գրական երկերում անարգական խօսքեր է գրել Հայերի մասին: Ի «Հիմնաւորումն» այս ասուածի, վկայակոչում են Պուշկինի յայտնի խօսքերը. «Տե՛ որուս, ուս ռած, ուս արման» («Վախկոտ ես, ստրակ ես, հայ ես դու»): Հակառակ այն բանին, որ ժամանակին մամուլում այս հարցը մանրամասն քննարկուած եւ պատասխանուած է եղել, այսօր եւս յաճախ լսելի են Պուշկինի հասցէին արուած այս հին զրպարտութեան մաշուած «փաստարկները»: Հստ այսմ, հարկ կայ վերստին անդրադառնալու այս չարչուած հարցին:

Մի կողմ թողնելով Պուշկինի վերաբերմունքը Հայերին, որ կարող էր իմանալ միայն բանաստեղծն ինքը, այստեղ փորձենք մի փոքր պարզաբանում մտցնել վերոբերեալ տողի եւ դրա բուն իմաստի մասին:

Սկսենք նրանից, որ իրօք, Պուշկինը այսպիսի խօսքեր գրել է: Թիւրիմացութիւնը ոչ թէ այդ խօսքերի հեղինակային

¹ ԳՐԻԳՈՐ ՌՐՈՒՏԵԿՆ, Ալեքսանդր Պուշկինի հետ կապուած մի թիւրիմացութեան մասին, «Առաւոտ», 1999, Մայիսի 6, էջ 12:

պատկանելութեան մէջ է, այլ դրանց իմաստի, դրանց տեղի եւ դրանց իրական բովանդակութեան: Գաղտնիք չէ, որ ամէն բառ, արտայայտութիւն, դարձուածք եւ նոյնիսկ նախադասութիւն իմաստաւորում է այն խօսքի մէջ, որի մասը դա կազմում է: Շատ կան դէպքեր, երբ հատուածը, կտրուելով ամբողջից, ոչ միայն իմաստագրկում է, կորցնում է իր բուն իմաստը, այլ նաև ստանում է բոլորովին տարբեր (Երբեմն՝ նոյնիսկ հակառակ) իմաստ: Ասուածի մի փայլուն օրինակ է աստուածաշնչեան յայտնի պատուիրանը. «... եթէ մէկը քո ազ ծնօտին ապտակ տայ, նրան մի՞ւսն էլ դարձրու» (Մտթ., Ե, 39, նաեւ՝ Ղուկ., Զ, 29): Նոյնիսկ այսօր այս պատուիրանը շատերի կողմից մեկնարանում է իր քրիստոնէութեան «կատ կրօն» լինելու «ապացոյց», թէ՝ «Տեսէ՛ք, քիստոնէութիւնը հայերիս դարձրել է քշնամիների դէմ չմարտնչող, չպայժարող ազգ, եւ այդ պատճառով էլ կորցրել ենք մեր մեծ երկիրը...»: Հասկանալի է, որ քրիստոնէութիւնը երբեք չի պատուիրել թշնամիների դէմ անպաշտպան թողնել սեփական երկիրը, թողնել, որ չարը յաղթի ու ծաւալի իր չարագործութիւնը եւ այլն: Այս անհիմն մեղադշանքները քրիստոնէութեան հասցէին ծնուել են Աւետարանի մի փոքրիկ հատուածը իր բուն շարադրանքից անջատ դիտարկելու եւ բոնազբօս մեկնաբանութիւնների ենթարկելու հետեւանքով: Առանձին հարց է նաեւ, թէ ինչու է այդպէս արուել: Հասկանալի է, որ այդ թիւր մեկնաբանութիւնը ունեցել է եւ այսօր էլ ունի իր շահագրգիռ ջատագովները, որոնց համար բուն ճշմարտութիւնը չիմանալը ճեռնտու արդարացում է նպատակային քարոզչութիւնը առաջ տանելու համար: Չծաւալուեմ այլ օրինակներ բերելով: Կարծում եմ ասուածն ինքնին հասկանալի է եւ ընդունելի:

Այս այս ասուածը յատկապէս վերաբերում է Ալ. Պուշկինի վերոբերեալ տողին, որ պոկուելով իր տեղից, կտրուելով իր մայր շարադրանքից, ոչ միայն կորցրել է իր բուն իմաստը, այլև ստացել է ճիշտ հակառակ իմաստ: Որպէսզի ասուածը չհնչի իրը մերկապարանոց յայտարարութիւն, նայենք Պուշկինի այն երկը, որից այդ տողը քաղուած է:

Այս տողը քաղուած է Ալ. Պուշկինի «Տագիտ» անաւարտ պօէմից, որ գրուած է 1829-30 թուականներին²: Թէպէտ պօէմը

² Այս տեղեկութիւնը 1980-ականների սկզբին ինձ տուել էր ճարտարապետ Բորիս Յարութիւնեանը, որին եւ շնորհակալ եմ դրա համար:

անաւարտ է, այդուհանդերձ դա չի խանգարում խնդրոյ առարկայ տողի իմաստը հասկանալուն: Որպէսզի հնարաւոր լինի ճիշտ հասկանալ յիշեալ տողի իմաստը, նախ համառօտ նայենք, թէ ինչի մասին է այս պօչմը, ինչ անցուդարձ է նկարագրուած այդ պօչմում:

Նկարագրում են չեչենական մի գիւղում (առւլում) կատարուող դէպքեր: Սպանուած է մի երիտասարդ, եւ նրա թաղման աւարտին հանգուցեալի հօրն է մօտենում օտար առողից եկած մի ալեհեր ծերունի մի երիտասարդի հետ: Երիտասարդը սպանուածի եղբայրն է: 13 տարի առաջ հայրը իմաստուն ծերունու խնամքին է յանձնել իր այս որդուն (տակաւին մանկահասակ), որ ծերունին կրթի ու դաստիարակի երեխային: Եւ ահա՝ աւագ որդու մահուանից յետոյ ծերունին հօրն է վերադարձնում կրտսեր որդուն՝ իր դաստիարակածին: Նրա անունը Տագիտ է: Հայրը երեք օր հիւրընկալում, պատում, մեծարում է երախտաւոր ծերունուն: Նկատենք, որ այս պօչմի պահպանուած հեղինակային սեւագիր նշումներում կայ պօչմի նախագծի մի տարբերակ, որում հէնց այս հատուածում նշուած է: Տրք ծոյք. Կերկէս հրաւանակ □ Երեք օր: Քրիստոնեայ չերքէզ³: Սա նշանակում է, որ ըստ Պուշկինի մտայլացման, Տագիտին դաստիարակած ծերունի չերքէզը քրիստոնեայ է եղել, եւ ըստ այսմ, Տագիտը, որպէս վերջինիս սանը, պիտի դաստիարակուած լինի հէնց քրիստոնէական աշխարհընկալմամբ, քրիստոնէական արժէքներով: Ինչաքս կը տեսնենք յետագայ վերլուծութիւնից, այս եզրակացութիւնը աւելի քան հիմնաւոր է: Ինչ վերաբերում է նրա ծնողներին, վերջիններն անկասկած մահմեդականներ են. այդ է վկայում Տագիտի եղբօր թաղման ծէսին մոլլայի մասնակցութիւնը (թաղման սկզբում հնչում է մոլլայի երգը): Յաւօք, պօչմի մեզ հասած մասը բաւարար չէ պարզէլու համար, արդեօք Տագիտը դաստիարակուել է որպէս քրիստոնեայ, թէ⁴ ծերունու դաստիարակութիւնը նրան թողել է իր հայրերի հաւատտին: Ամենայն հաւանականութեամբ Տագիտը եւս մահմեդական է. այդ է

³ ՏԵ՛ս Ա. Պուշկին, Полное собрание сочинений, т. 2, изд. “Правда”, М. 1954, ст. 535:

⁴ Ի դէպ, ուշագրաւ է այն, որ մահմեդական Գասուրը իր երկու որդիներից մէկի կրթութիւնը վստահէլ է ոչ թէ մահմեդականի, այլ քրիստոնեայի: Սա մէկի կրթութիւնը վստահէլ է ոչ թէ մահմեդականի, այլ քրիստոնեայի: Սա մէկի կամ էլ դաստիարակ ծերունու բացառիկ հանդուժութողակարող է վկայել կամ լեռնականների կրօնական բացառիկ հանդուժութողակարող է վկայել կամ էլ դաստիարակ ծերունու բացառիկ բարձր հեղինակունութեան մասին:

վկայում պօէմի նախագծերից մէկը՝ պահպանուած հեղինակի թղթերում, ըստ որի Տազիտը յետագայում հանդիպում է մի քարոզչի եւ, «ըստ երեւոյթին, դառնում է քրիստոնեայ»⁵: Բնականաբար, նախապէս նա պիտի լինէր ոչ քրիստոնեայ, ուրեմն՝ մահմեղական: Միեւնոյն ժամանակ, անկախ տղայի կրօնական պատկանելութիւնից, ինչպէս կը տեսնենք ստորեւ, Տազիտի աշխարհը նկալումը, արժէքային համակարգը եւ բարոյականութիւնը միանդամայն քրիստոնէական են:

Հայրը շատ մեծ յոյսէր է կապում հեռուում իմաստուն ծերունու մօտ 13 տարի կրթուած իր նորեկ որդու հետ: Սակայն Տազիտը չի արդարացնում հօր ակնկալիքը: Առաջին հիասթափութիւնը Գասուլ ծերունին ունենում է Տազիտի ընդհանուր վարքից. տղան չի մերւում իր նոր միջավայրին: Նա լուռ է, չչփուող եւ հայրենի առլում օտարի պէս է իրեն պահում: Երկար միայնակ գեղերում է լեռներում, լուսմ, խորհում ու երազում: Հայրը մտովի համեմատում է Տազիտին իր կորցրած որդու հետ եւ որոշակիօրէն մնում գժգոհ.

... Но отец

Уже Тазитом недоволен.

“Где же, — мыслит он, — в нем плод наук,

Отважность, хитрость и пророчество,

Лукавый ум и сила рук?

В нем только лень и непокорство.

Иль сына взор мой не проник,

Иль обманул меня старик”.

(Այսուղ եւ յետագայում բերուող թարգմանութիւնները իմն են - Գ. Բ.):

Գասուլը սկսում է կասկածել ե՛ւ որդու արժանիքների, ե՛ւ էլ չերքէզ դաստիարակի տուած կրթութեան վրայ: Այսուղ յատակ նշուած են, թէ ինչպիսին է իր որդուն ուղղում տեսնել չեչեն ծենչունին: Նրա համար իր որդու ցանկալի յատկանիշներն են խիրունին: Նրա համար իր որդու գախութիւն, նենդութիւն, ուժ, արագաշարժութիւն: Իսկ որդու գախութիւն, նենդութիւն, ուժ, արագաշարժութիւն: Իսկ որդու խորհող, մտագբաղ պահուածքը հայրն ընկալում է իբր ծուլութիւն: Այսինքն, մարդկային վարքի որոշ յատկանիշներ նրա հաթիւն:

... սակայն հայրն

Արդէն դժգոհ է Տազիտից:

«Ո՞ւր է պտուղը գիտութեան՝

Ժիր, խորամանկ ու անվեհեր

Պահուածքը իր, - խորհում է նա:

Ո՞ւր է նենց միտքն, ուժը բազկի...

Լոկ ծուլութիւն, ըմբոստութիւն

կայ նրա մէջ:

Կամ ե՛ս որդուս չեմ հասկանում,

Եւ կամ խարեց ինձ ծերութիւն»:

⁵ А. С. Пушкин, Собрание сочинений, т. 3, Гос. изд. художественной литературы, М. 1960, ст. 512 – 513.

մար պարզապէս անընկալելի են: Եւ իր չընկալած յատկանիշները Գասուբը նոյնացնում է մօտիկ կամ համանման դրսեւորում ունեցող այլ՝ բացասական յատկանիշների հետ: Ահա, հէնց այս նոյն մօտեցմամբ էլ նա գնահատում է Տագիտի վարքը պօէմում նկարագրուած երեք սկզբունքային դրուագներում: Ի դէպ, ինչ պէս ստորեւ կը տեսնենք, Տագիտի վարքի այսպիսի գնահատականով՝ Գասուբը միայնակ չէ: Նոյն մօտեցմամբ է Տագիտի վարքը գնահատում նաև նրա սիրած աղջկայ հայրը:

Այլ (Քրիստոնէական) միջավայրում դաստիարակուած Տագիտի բարոյական կերպարն ու շրջապատի (իր հօր, ապա նաև սիրած աղջկայ հօր) կողմից դրա ընկալումն ու գնահատումը բացայատում են երեք սկզբունքային դրուագներով:

Մի օր Տագիտը ձիով հեռանում է գիւղից եւ վերադառնում երկու օր բացակայելուց յետոյ: Հայրը, ասես, հարցաքննումն է որդուն, պարզում, թէ ուր է նա եղել եւ ինչ է տեսել.

А не видел ли ты грузин
Иль русских?

Сын
Видел я, с товаром
Тифлисский ехал армянин.

Отец
Он был со стражей?

Сын
Нет, один.

Отец
Зачем нечаянным ударом
Не вздумал ты сразить его
И не прыгнул к нему с утёса?—

իսկ չտեսա՞ր դու վրացոց,
կամ ոռւսների:

Որդի՛
Մի հայ տեսայ թիֆլիգեցի,
Անց էր կենում իր բնոներով:

Հայրը
Պահակներո՞վ:

Որդի՛
Ոչ, միայնակ:

Հայրը
Ինչո՞ւ զարկով անակնկալ
Դու չուզեցար խոցել նրան,
Ու քարափից չցատկնցիր նրա վրայ:

Հայրը զարմանում է, թէ ինչու իր որդին վրայ չի հասել, չի թալանել անպաշտպան ճամփորդող հային (որ կը համապատասխանէր ըստ իր պատկերացրածի՝ իսկական չէչեն տղամարդու վարքին):

Արտեղ թիւրիմացութեան առիթ չտալու եւ ուեէ ազդի հասցէին վիրաւորանք արտայայտած չլինելու համար նկատենք, որ խօսքը վիրաբերում է մեզից 180 տարի առաջ չէչեն լեռնականների մասին Պուչկինի ունեցած պատկերացումներին:

Անցնենք առաջ:

Տազիտը դարձեալ երկու օր բացակայում է, եւ հայրը էլի հարցնում է վերադարձած որդուն.

Կողո տեսար դու:

Ծնի

На кургане

От нас бежавшего раба.

Օտեւ

О милосердная судьба!

Где же он? Ужели на аркане

Ты беглеца не притащил? -

Ո՞ւմ տեսար դու:

Որդին

Բլրի վրայ՝

Մեզնից փախած մի ըստուկի:

Հայրը

Օ՛, բարեգութ ճակատագիր,

Ո՞ւր է: Մի՞թէ օդաքոկով՝

Դու փախածին ես չըերիր:

Տազիտը վերստին դրական պատաժան չունի. Նա միայն գլուխն է խոնարհում: Երրորդ բացակայութիւնից յետոյ հօր եւ որդու խօսակցութիւնը աւարտում է պայթիւնով.

Օտեւ

Կողո տեսար դու:

Ծնի

Супостата.

Օտեւ

Կողո? Կողո?

Ծնի

Убийцу брата.

Օտեւ

Սակայն սին մոего!...

Приди!.. где голова его?

Տաշտ!.. Мне череп этот нужен

Дай нагляжусь!

Ծնի

Սակայն սին

Один, изранен, безоружен...

Օտեւ

Տա դոլга крови не забыл!...

Վрага ты навзнич опрокинул,

Не правда ли? ты шашку вынул,

Տա յանու տա յանու տա յանու

И трижды тихо повернул,

Սա յանու տա յանու տա յանու

Սա յանու տա յանու տա յանու

Սա յանու տա յանու տա յանու

Ես յանու տա յանու տա յանու

Հայրը

Ո՞ւմ տեսար դու:

Որդին

Մեր ոսովին:

Հայրը

Ո՞ւմ, ո՞ւմ:

Որդին

Եղրօրս ըսպանողին:

Հայրը

Ըսպանողին իմ զաւակի...

Մօ՞ն եկ, ... ո՞րտեղ է կառափը նրա:

Տազի՞ն, ինձ գանգը է այդ հարկաւոր,

Տուր լըրոշխնեմ:

Որդին

Ոսովին անզէն էր

Ու միայնակ ու վիրաւոր...

Հայրը

Չմոռացա՞ր արեան քո պարտքը...

Ըզգեստնեցի՞ր, չէ՞ ոսովին,

Փուրով սուսերը հանցիր,

Միջնեցիր պողպատն իր սիրտը

Ու եռակի պըրըտնեցիր

Եւ արքեցար իր բառանչով,

Իր օճախին հոգեվարքով...

Ո՞ւր է կառափը,... տուր... ուժ չունեմ...

Բայց որդին լուր է՝ գլխիկոր:

Ու սեւակնեց Գասուրը իխաս

Ու որուաց որդուն ուժգին:

Վլէժիսնդրութեան մոլուցքով արքած հայրը հեշտանք է ապրում, պատկերացնելով, թէ ինչպէ՞ս պիտի Տազիտը խողիսողած լինի անգին ու անկարող թշնամուն, ինչպէս պիտի նա արքեցած լինի մեռնող թշնամու տնքոցով եւ, ի ցուցադրումն այդ ամէնի, պահանջում է իրեն տալ ատելի գլուխը: Սակայն Տազիտը լուսմ է: Պարզ է. նա այդ ամէնը չի արել:

Այստեղ հատնում է որդեկորոյս լեռնականի համբերութիւնը: Իր որդու վարքը ոչ մի կերպ չի տեղաւորւում կեանքի եւ լեռնցի տղամարդու մասին իր պատկերացումների սահմանում: Նրա զայրոյթը, յուսախաբութիւնը եւ վիշտը դուրս են պոռթկում, եւ նա վտարում է որդուն՝ երեսին նետելով նրա աններելի թերացումները.

Поди ты прочь - ты мне не сын,
Ты не чеченец - ты старуха,
Ты трус, ты раб, ты армянин!
Будь проклят мной! поди - чтоб слуха
Никто о робком не имел, ...

Գնա՛ անդին, որդիս չես էլ,
Պառա՛ ես դու, չեմ չն՛ս դու,
Վախուն ես, ստրո՛վ ես, հա՛յ ես դու:
Անձն ենզ - քող երկչոտի
Մասին էլ ոչ ոք չըսի, ...

Ահա հէնց այս հատուածում է բազմիցս հոլովուած՝ վերը յիշեալ տողը: Ի՞նչ է ստացւում, երբ նայում ենք այս տողը ոչ թէ առանձին, այլ ամբողջ (թէպէտեւ անաւարտ) պօէմի մէջ:

Տազիտը երեք սխալ, կամ աւելի ճիշտ՝ երեք մեղք է գործել:

Առաջին. նա չի յարձակուել անցին ու անպաշտպան երթեւեկող հայի վրայ եւ չի սպանել-թալանել վերջինիս: Եւ իր այս արարքը նա ոչ մի կերպ չի բացատրել-արդարացըել: Ու, քանի որ Գասուրի համար անպաշտպան երթեւեկող հային չթալանել չսպանելու համար ոեւէ բարոյական արգելք, այսինքն՝ բարոյական պատճառ գոյութիւն չունի, նա իր համար անհասկանալի երեւոյթը բացատրելու այլ պատճառ է վնասում: Իր իմացած հնարաւոր պատճառներից միայն վախկոտութիւնն է, որով հնարաւոր է այս արարքը բացատրել: Ուստի, այստեղից հայրը եղակացնում է, որ որդին պարզապէս վախկառ է:

Երկրորդ աններելի սխալը իրենցից փախած ստրուկին պատահելուց յետոյ նրան ազատ թողնելն է: Այս դէպքում էլ Տազիտը «արդարացում» չունի: Այս արարքի համար եւս Գասուրի պատկերացումներում բարոյական կարգի ոեւէ պատճառ չկայ: Եւ նա դարձեալ ընտրում է իր համար ամենամատչելի մեկնաբանութիւնը: Ահա այս կերպ հայրը Տազիտին վերադրում է ոչ աւելոչ պակաս՝ ստրկամտութիւն, ստրկանգիստիւն եւ նրան համարում է ստրուկ:

ԵՐՐՈՐԴԸ արդէն ոչ թէ սխալ է, այլ «ծանր, աններելի մեղք»: Տազիտը հանդիպել է հարազատ եղբօրը սպանողին: Եւ չի խոշտանգել ու չի սպանել նրան, այլ բաց է թողել: Արեան վրէժին իր յագուրդ չտալը Տազիտը «արդարացնում-պատճառաբանում» է նրանով, որ թշնամին «մենակ էր, անգէն ու վիրաւոր»: Ի դէպ, ըստ էութեան Տազիտը չի էլ փորձում արդարացնել իր այս արարքը: Պօէմում Տազիտի այս խօսքերը չեն դրուած որպէս նրա կողմից արդարացման փորձ: Տաղարութիւնն այն է, ասես, Տազիտը սա ասում է ընդամէնը իրադարձութեան պատկերն ամբողջացնելու համար: Ի դէպ, սա երեք սկզբունքային դրուագներից միակն է, որտեղ Տազիտը ինչ-որ բան է ասում ի բացատրութիւն իր վարքի: Ամենայն հաւանականութեամբ, նա քաջ գիտակցում է, որ իր հօր համար իր արարքը, միեւնոյնն է, կը մնայ անընկալելի: Այս «բացատրութիւնը» Տազիտի հօր համար իրօք անհասկանալի է. դա նոյնիսկ բացատրութիւն էլ չէ: Եւ նա դարձեալ իր պատկերացումների զինանոցում է համապատասխան պատճառ: Այս անգամ, սարկան, այդ «զինանոցը» բաւարար չէ. Զեչեն տղամարդու համար հնարաւոր նոյնիսկ ամենավատ, ամենաբացասական յատկանիշերը ի զօրու չեն պատճառ լինելու այսքան արտառոց արարքի համար: Նա հրաժարւում է որդուն չեչեն համարելուց, քանի որ նրա վարքը չի ներդաշնակում չեչենի մասին իր ունեցած պատկերացումներին: Գասպուրը որդուն դուրս է հանում իր ազգից եւ իր ընտանիքից: Նա հրաժարւում է որդուց եւ հրաժարւում է նրան չեչեն համարելուց: Եւ, եթէ Տազիտը չեչեն չէ, ապա Գասուբին ծանօթ ազգերի մէջ տղայի արարքը կարող է ներդաշնակել միայն Հայի վարքին: Ահա այս կերպ նա կարողանում է բացատրել Տազիտի վարքը: Նա Տազիտին համարում է հայ: Տազիտի վերջին՝ ամենառչեչենական արարքը կարող է լինել միայն հայի արարք:

Արդ, երբ իրար դիմաց ենք շարում Տազիտի այս երեք արարքները եւ աւազակաբարոյ լեռնականի կողմից դրանց տրուած գնահատականները, ստանում ենք հետեւեալ պատկերը:

Անպաշտպան հային հանդիպելն ու չսպանել-չթալանելը վախկոտութիւն է:

Փախած ստրուկին պատահելուց յետոյ բաց թողնելը նշանակում է, որ ինքդ եւս ստրուկ ես:

Արեան վրէժին յագուրդ չտալը այն պատճառաբանութեամբ, թէ թշնամին «մենակ էր, անզէն ու վիրաւոր», նշանակում է լինել հայ:

Զմուռանանք, որ Պուշկինի պօչմում այս գնահատականները տուողը աւազակաբարոյ լեռնցին է: Նրա ըմբռնումների համաձայն հարկ էր անզէնին սպանել-թալանել, փախած ստրուկին բըռնել-բերել, եւ անվարան խոշտանգել-սպանել եղօրոն սպանողին՝ անկախ ամէն ինչից (առաւել եւս, եթէ վերջինս «մենակ էր, անզէն ու վիրաւոր»): Ազնուռութիւն, արդարացիութիւն, խղճմը-տանք, եւ այս կարգի այլ բարոյական հասկացութիւններ խորթ են այս լեռնականին: Բայց նա գիտէ, որ այդ կարգի յատկութիւնների կրողը հայն է: Եւ հէնց այդ պատճառով էլ որդուն հայ է անուանում: Նա ապրում եւ մտածում է իբր աւազակ, խկ որդին՝ Տազիտը դաստիարակուել է այլ տեղ եւ այլ բարոյականութեամբ: Տազիտին դաստիարակած իմաստուն ծերունին նոյնիսկ գովում է իր սանին: Այսինքն, ոչաւազակային բարոյականութեան մէջ Տազիտը լաւն է, կատարեալ է: Այստեղից էլ բըզ-խում է հօր եւ որդու աններդաշնակութիւնը, հակասութիւնը: Նրանք տրամագծօրէն հակառակ բարոյականութեան կրողներ են: Եւ, եթէ հօր բարոյականութիւնը աւազակութիւնն է, ապա որդին հօր աչքում պարզապէս հայ է:

Կարեւոր է նկատել նաեւ, որ հօր կողմից որդուն տրուած երեք բնորոշումները դասաւորուած են որոշակի տրամաբանութեամբ: Այդ բնորոշումներից իւրաքանչիւր յաջորդը իր մէջ ներառնում է իր նախորդին: Իրօք, «վախկոտ, ստրուկ, հայ» շարքում երկրորդ յատկանիշը արդէն ենթադրում է առաջինի առկայութիւնը: Ստրուկը, բնականաբար, պիտի լինի նաեւ ստրկամիտ, ուստի եւ՝ վախկոտ: Այս նոյն տրամաբանութեամբ, հայն էլ պիտի լինի եւ՝ վախկոտ, եւ էլ ստրուկ: Միեւնոյն ժամանակ, սա նշանակում է նաեւ, որ այն արարքները, որոնց համար Տազիտն ստանում է «վախկոտ եւ ստրուկ» յորջորջումները, եւս հայի արարքներ են: Այսինքն, ըստ այս տրամաբանութեան, հային բնորոշ յատկանիշներն են.

ա. աւազակութիւն չանելը, անպաշտպան երթեւեկողին չժաւանել-չսպանելը,

բ. փախած ստրուկին պատահելուց յետոյ ազատ թողնելը (որ, ըստ էութեան, գթութեան, ողորմածութեան դրսեւորում է),

գ. եղբօրն սպանողին պատահելուց յետոյ արեան վրէժին յագուրդ չտալը այն պատճառաբանութեամբ, թէ վերջինս «անզէն

Եր ու միայնակ ու վիրաւոր»: Այս վերջին կէտում առկայ է քրիստոնէական ներողամտութիւնը, եւ սա լիովին ներդաշնակում է աւետարանական պատուիրաններին՝ թշնամիններին սիրելու եւ պարտապաններին թողութիւն տալու մասին. «սիրեցէ՛՛ ձեր քշ-նամիններին» (Մատթէոս, Ե, 44, Զ, 12):

Այս առժիւ տեղին է յիշել եւ Պուշկինի սեւագրերում մը-նացած նշումը քրիստոնէայ չերքէզի մասին: Եւ, եթէ համարենք, որ Տաղիտին դաստիարակած ծերունի չերքէզը իրօք քրիստո-նեայ է եղել, ապա կը նշանակի, որ Տաղիտը ինքը եւս պիտի դաստիարակուած լինի քրիստոնէական բարոյականութեամբ: Այս տեսանկիւնից նրան հայ յորջորջելը դառնում է աւելի քան բնա-կան, եւ Գասուրի կողմից Տաղիտին տրուած «հայ» յորջորջման մէջ ակնարկում է նաեւ նրա քրիստոնէայ դաստիարակ ունեցած լինելը:

Այսպիսով, երբ նայում ենք Պուշկինի վերոյիշեալ տողը իբր մաս աւ-բողջ պօչմի, տեսնում ենք, որ Պուշկինը հայ անու-նը գործածել է ոչ իբր անարգական յորջորջում, ոչ իբրեւ մի նուաստ ազդի անուն, այլ ճիշտ հակառակ իմաստով՝ իբր քրիս-տոնէական բարձրագոյն բարոյական յատկանիշների կրողի, իբր բարձրագոյն բարոյական չափանիշներով առաջնորդուողի անուն: Ըստ այսմ, աւելի քան անհիմն է Պուշկինի այս բազմաչարչար տողի վրայ հիմնուելով, նրան հակահայութիւն վերագրելը: Այս տողը բնաւ չի նշանակում, թէ Պուշկինը կարող է եղած լինել հակահայ, կամ հայատեաց: Եւ ընդհակառակը. այս տողից կարե-լի է եղրակացնել, որ Պուշկինը հային իմացել է իբր որոշա-կիօրէն բարձր քրիստոնէական բարոյական յատկանիշների, քրիստոնէական առաքինութիւնների կրող:

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ*

* ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումեանի Տուն-Թանգարան, Արագածոտնի մարզ,
378433, Հայաստան, Byurakan Astrophysical Observatory, Armenia 378433 , E-
mail address: vhm@sci.am

Alexander Poushkin's poem "Tazit" and an analyze of its fragment concerning to Armenians

GRIGOR BROUTIAN
(summary)

- In Alexander Poushkin's poem "Tazit" there is a phrase: "*You are coward, you are slave, you are Armenian*". On the basis of this fragment a very long time exists an opinion that Poushkin hated Armenians. Although Poushkin's poem "Tazit" is unfinished, the analyze of the existing parts of this poem and its rough copies allows us to prove that the above cited words in this poem mean that Poushkin knows Armenians as a nation with the highest Christian virtues. The fact is, that in the poem by these words a Chechen man is performing his relation to his son (Tazit) who had done three unforgivable mistakes (or even crimes). Analyzing these "crimes" we see that in all three cases Tazit had performed the highest Christian virtues. First he met an Armenian merchant who was traveling with his baggage without any guard. Instead of attacking and robbing and killing the merchant Tazit let him go with peace. This his father understands as a performance of fear. The second time Tazit somewhere on a hill met their slave who had escaped. Instead of holding him and taking back Tazit allows him to go. For Tazit's father this is a sign of being slavish. The third-the most unforgivable act of Tazit was that he met their family enemy- the murderer of his brother, and instead of killing him he let him go also. As an explanation for such "strange" action Tazit tolled his father that the murderer was alone, wounded and unarmed. This time the old Chechen man could not find any other explanation for his son's action than to consider his son is a man with the moral of an Armenian. So he refused to own his son as a Chechen man and named Tazit an Armenia, and here he pronounced the words cited above. So the analyze of the existing part of the poem show that at least in this poem Poushkin has used the name of Armenian as an equivalent of a man with the highest Christian virtues, and all the accusations to his address as a man who hated the Armenian nation on the basis of these words are unfounded.